ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/88

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.06.2018թ. թիվ 03/26-3/11269-18 գրությամբ «ՍԱՄԻ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02672301/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Արմավիրի համայնքապետարանի 13.07.2018թ. թիվ 787 գրության հիման վրա, 21.06.2018թ. նախաձեռնել է «ՍԱՄԻ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>Արմավիրի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Արմավիրի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 13.07.2018թ. թիվ 787 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Արմավիրի համյանքապետարանի կարիքների համար Արմավիր համայնքի ասֆալտածածկ փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-15-18» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սամի» ՍՊԸ-ն: «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում է ներկայացվել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող և հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից, Ձեզ է ներկայացվում «Սամի» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Անի Թաշչյանը:

3. <u>«Սամի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Սամի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2018թ. թիվ 03/26-3/11269-18 գրությամբ

Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.06.2018թ. թիվ 03/26-3/11269-18 գրությունը և կից փաստաթղթերը, Արմավիրի համայնքապետարանի 13.07.2018թ. թիվ 787 գրությունը, «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-15-18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-15-18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.06.2018թ. նիստի թիվ 2 և 12.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները.

Արմավիրի համայնքապետարանի կարիքների համար ասֆալտածածկ փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների գնման նպատակով կազմակերպված «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-15-18» ծածկագրով գնանշման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Սամի» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի N1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումով, հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-15-18» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 06.06.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով արձանագրել է, որ Ընթացակարգի շրջանակներում «Սամի» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը կազմել է 16,404,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և նույն արձանագրության 3.2 կետով որոշել է «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-15-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Սամի» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ հարցում ներկայացնել «Սամի» ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ Արմավիրի համայնքապետարանին 08.06.2018թ. տրամադրած՝ պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությամբ՝ «Սամի» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների (2015, 2016, 2017թթ.) Ընկերության համախառն եկամուտի հանրագումարի, ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում Ընկերության պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքների վերաբերյալ որևէ թվային ցուցանիշ չի ներկայացվել (նշված սյունակներում դրված են եղել գծիկներ):

Հանձնաժողովը 12.06.2018թ. ժամը 10:00-ին նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ հրավերի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման արդյունքում՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում «Սամի» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին չհամապատասխանող, և նույն կետով որոշել է մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:
- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր

տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«ԱՔ-ԳՀԱՇՁԲ-15-18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 2.5 կետի 3-րդ ենթակետի՝

- «ա» պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը(...):

- «բ» պարբերության համաձայն՝ նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական

միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

- 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ

զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

«ՍԱՄԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով՝ Բողոքներ քննող անձը հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ խնդրելով հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել նույն գրության մեջ նշված՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 08.06.2018թ. տրամադրած տեղեկատվության մեջ համապատասխան թվային ցուցանիշների բացակայության պատճառների մասին եզրակացություն: Միաժամանակ Բողոքներ քննող անձը խնդրել է նաև տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ինչպիսի դեպքերում են ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրամադրվող տեղեկատվության մեջ բացակայում համապատասխան թվային ցուցանիշները:

Սակայն, վերը նշված հարցման վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից որևէ պատասխան չի ստացվել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է այն հիմնավորմամբ, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 08.06.05.2018թ. տրամադրված տեղեկատվության արդյունքում «Սամի» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին չհամապատասխանող:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված՝ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրելուց հետո Հանձնաժողովը նույն օրն էլեկտրոնային եղանակով չի ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ չծանուցելով Ընկերությանը և չառաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունը՝ խախտել է Կարգի 47-րդ կետով և Հրավերի 7.20 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներն, ինչի արդյունքում Ընկերություն զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետում Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատված փաստաթղթի շտկված տարբերակը Հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սամի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2018թ. թիվ 03/26-3/11269-18 գրությամբ «ՍԱՄԻ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02672301/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**